

Your child's education begins at home.



Միասին աշխատելով՝ ծնողները և ուսուցիչները իրենց երեխաներին տալիս են սովորելու լավագույն հնարավորությունը

Կալիֆորնիայի Ուսուցիչների Ընկերակցությունը և Կալիֆորնիա Նահանգի Ծնողաուսուցչական Ընկերակցությունը (PTA) իրենց ուժերը միացրել են՝ ձեզ առաջարկելու խորհուրդներ, որոնք ձեր երեխաներին կտան դպրոցում հաջողվելու լավագույն հնարավորությունը:

- 1. Պարզապես հարցրեք:** Հարցրեք ձեր երեխաներին, թե ի՞նչ են սովորել այսօր դասարանում – ի՞նչ են հավանել և ի՞նչ են սովորել: Հարցեր տալը դպրոցի կարևորությունը կդրսևորի:
- 2. Լուռ պարապմունք:** Տանը պարապելու համար ընտրեք մի վայր և ապահովեք սենյակի լռությունը այդ ժամանակամիջոցում: Լուռ վայրի ստեղծումը մեծապես կնպաստի ձեր երեխաների սովորելուն:
- 3. Կանոնավոր ժամանակացույց:** Օրվա ընթացքում սահմանեք պարապմունքին հատկացված ժամանակ: Հետևեք ձեր երեխաներին, որպեսզի նրանց տնային վարժությունները ամբողջացված և վերադարձված լինեն ժամանակին:
- 4. Միասին սովորեք:** Եթե ցանկանում եք, որ ձեր երեխաները կարդան իրենց պարտականությունները՝ դուք ձեզ էլ տվեք պարտականություն: Երբ ժամանակ է, որ նրանք տնային վարժություն կատարեն, դադար տալով դուք ձեզ՝ մի քանի րոպե անցկացրեք գիրք, ամսագիր կամ օրաթերթ կարդալով:
- 5. Սովորեք ամեն տեղ:** Ավելացրեք ձեր երեխաների հետաքրքրությունը վարժությունների նկատմամբ՝ դպրոցը առնչելով առօրյա կյանքին: Օրինակ, ձեր երեխաները կարող են սովորել կոտորակներ և չափումներ՝ նախապիտած կերակուրները միասնաբար պատրաստելիս:
- 6. Տեսնվեք նրանց ուսուցիչների հետ:** Հանդիպեք ձեր երեխաների ուսուցիչների հետ՝ իմանալու համար, թե ի՞նչ են սովորում նրանք և քննելու համար նրանց առաջադիմությունը դպրոցում:
- 7. Գովեստը օգնում է:** Գովեք ձեր երեխաներին տնային վարժությունների հաջող կատարման համար: Երեխաներին ոչ մի ուրիշ բան չի քաջալերի այնքան, որքան իրենց ծնողների գնահատանքը:



The California Teachers Association and the California State PTA have joined forces to offer some tips for you that will give your children the best opportunity to succeed in school.

- 1. Just Ask.** Ask your children what they studied in class today — what they liked and what they learned. Asking questions shows that school is important.
- 2. Quiet Study.** Choose a place for home study and make sure the room is quiet during that time. Creating a quiet place goes a long way toward helping your children learn.
- 3. Regular Schedule.** Set up a certain time of day that is dedicated to homework. Follow up with your children to be sure their homework is complete and turned in on time.
- 4. Learn Together.** If you want your children to read their assignments, give yourself an assignment, too. When it's time for them to do homework, take a break and spend a few minutes reading a book, magazine or newspaper.
- 5. Learn Everywhere.** Increase your children's interest in homework by connecting school to everyday life. For instance, your children can learn fractions and measurements while you prepare favorite foods together.
- 6. Meet Their Teachers.** Meet with your children's teachers to find out what they are learning and discuss their progress in school.
- 7. Praise Helps.** Praise your children for successfully completing homework. Nothing encourages children more than praise from their parents.



California State
PTA
every child. one voice.